**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**30 դեկտեմբերի 2024 թվականի**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N12**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ**

---

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը
ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյանը
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գավառ համայնքի ավագանու թվով 14 /տասնչորս/ անդամներ

Գ. Դաշտոյանը, Ս. Ամիրխանյանը, Գ. Մկրտչյանը, Օ. Դանոյանը, Ա. Վարդանյանը, Ա. Պետոյանը, Ռ. Պողոսյանը, Ն. Միրիբյանը, Ա. Մարուխյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գուլաբյանը, Դ. Միրիբյանը, Ս. Զաքոյանը
Նիստին մասնակցում էին՝ Գավառի համայնքապետարանի աշխատակիցներ, Գավառ համայնքի բնակիչներ

**ՕՐԱԿԱՐԳ**

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ**

1. Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հաստատման մասին:

/զեկ. Կ. Մանուկյան/

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական և նախադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող բնակչության որոշակի խմբերի համար արտոնություններ սահմանելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 343-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/զեկ. Տ. Բրսիկյան/

3. Գավառի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի թվաքանակների, հաստիքացուցակների, կառուցվածքների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 346-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

.զեկ. Տ. Բրսիկյան/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

/զեկ. Տ. Բրսիկյան/

5.«Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը Լաուրա Կարոյի Մանուկյանի անվամբ անվանակոչելու մասին:

/զեկ. Հ. Եսայան/

6. «Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

/զեկ. Հ. Եսայան/

7. Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

/զեկ. Հ. Սարգսյան/

8. «Գավառ համայնքի 2025-2029 թվականների երիտասարդական քաղաքականությունը հաստատելու մասին»:

/զեկ. Հ. Սարգսյան/

9. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը հաստատելու մասին:

/զեկ. Հ. Սարգսյան/

10. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը մրցութային կարգով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու և տարեկան վարձավճար սահմանելու մասին:

/զեկ. Ա. Ղուրշուդյան/

ՀԱՐՑ 1.
ՈՐՈՇՈՒՄ 365-Ա. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՁԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 2.
ՈՐՈՇՈՒՄ 366-Ա. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 343-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածների դրույթներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական և նախադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող բնակչության որոշակի խմբերի համար արտոնություններ սահմանելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 343-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը և 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական և նախադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող համայնքի բնակչության նշված սոցիալական խմբերի համար սահմանել հետևյալ արտոնությունները.
1) Երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամություն ունեցող երեխաներին, մանկատան սաներին, հաշմանդամության առաջին կարգ ունեցող ծնողների երեխաներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների /ազատամարտիկների/, զինվորականների և ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց երեխաներին ազատել վարձավճարից:
2) Արտադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ (չորս և ավելի) ընտանիքների, նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար սահմանել արտոնություն 50%-ի չափով:
3) Մանկապարտեզների սաների հաճախումների բացակայությունների դեպքում, բացակայած օրերի համար վարձավճար չի գանձվում, եթե ծնողը ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանք երեխայի հիվանդության վերաբերյալ:
3. Հավելված 1-ի 17-րդ կետով սահմանված դրույքաչափը Գավառ համայնքում հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:
4. Հավելված 1-ի 9-րդ կետի 1) և 2) ենթակետերի բ, գ, դ, ե, զ պարբերություններով սահմանված նվազագույն դրույքաչափերի նկատմամբ Գավառ քաղաքում կիրառել 0.5, իսկ մյուս 11 բնակավայրերում 0.3 գործակից:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 01-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՁԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 3.
ՈՐՈՇՈՒՄ 367-Ա. «ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. «Գավառի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի թվաքանակների, հաստիքացուցակների, կառուցվածքների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման

մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 346-Ա որոշման հավելվածով հաստատված «Գավառի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Գավառի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Գավառի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Նորատուսի Ս. Հակոբյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Կարմիրգյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Գեղարքունիքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Լանջաղբյուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Լճափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Ծովազարդի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Գանձակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի թվաքանակները, հաստիքացուցակները, կառուցվածքները և պաշտոնային դրույքաչափերը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԶԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 368-Ն. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Դ. Միրիբյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3րդ մասի պահանջներով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Գավառ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
3. Թույլատրել Գավառ համայնքի ղեկավարին՝ 2025 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 20 %:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՋԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 5.
ՈՐՈՇՈՒՄ 369-Ա. «ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ը ԼԱՈՒՐԱ ԿԱՐՈՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1. մասի 22) կետով և հիմք ընդունելով նախաձեռնող խմբի առաջարկությունը, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. «Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը անվանակոչել Լաուրա Կարոյի Մանուկյանի անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՋԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 6.
ՈՐՈՇՈՒՄ 370-Ա. «ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28) կետով, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել «Սարուխանի թիվ 1 մազնկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՁԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 7.
ՈՐՈՇՈՒՄ 371-Ա. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1.Գավառ համայնքի 2025թ-ի բյուջեում հատկացնել 10.000.000 դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են կանաչապատում, կրթություն, սպորտ, երիտասարդություն և մշակույթ ոլորտները՝ որպես առաջնահերթություն:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ շահագրգիռ յուրաքանչյուր ոք, համայնքի բնակիչները, նրանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը, քաղաքացիական հասարակությունը, հասարակական կազմակերպությունները:

4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՁԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 8.
ՈՐՈՇՈՒՄ 372-Ա. «ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ա. Պետոյանը

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և նպատակ ունենալով աջակցել Գավառ համայնքի երիտասարդների զարգացմանն ու ներգրավվածությանը համայնքի կառավարման գործընթացներում, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025-2029 թվականների երիտասարդական քաղաքականությունը (կից):

2. Հաստատել «Գործողությունների պլան 2025 թ.» Գավառ համայնքի երիտասարդական քաղաքականության իրականացման նպատակով (Հավելված 1):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՋԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 9
ՈՐՈՇՈՒՄ 373-Ա. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Դ. Միրիբյանը

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9)-րդ կետի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20)-րդ կետի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4.4. հոդվածի դրույթներով, առաջարկվում է.

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028 թվականների տեղական պլանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՋԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՐՑ 10.

ՈՐՈՇՈՒՄ 374-Ա. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով, առաջարկվում է.

Համաձայնություն տալ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող 2-րդ կարգի 100հա մակերեսով, 3-րդ կարգի 200հա մակերեսով, 4-րդ կարգի 300հա մակերեսով և 5-րդ կարգի 120հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 3-րդ կարգի 210հա մակերեսով, 4-րդ կարգի 50հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքները, 4-րդ կարգի 1200հա մակերեսով, 5-րդ կարգի 1500հա մակերեսով, 3-րդ կարգի 100հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրերը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով 2048 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով մրցույթով տրամադրելու վարձակալության:
2. Նշված հողատեսքերից 2-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել 7500 /յոթ հազար հինգ հարյուր/, 3-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 6200 /վեց հազար երկու հարյուր/, 4-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը՝ 4200 /չորս հազար երկու հարյուր/, 5-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի

մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 4000 /չորս հազար/ , 4-րդ կարգի մեկ հեկտար խոտհարքի տարեկան վարձավճարը՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, 4-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, 5-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ, 3-րդ կարգի մեկ հեկտար արոտավայրի վարձավճարը՝ 3400 /երեք հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԶԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նիստին մասնակցած ավագանու անդամներ

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ

ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ

ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԶԱՔՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ

ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ

ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ